**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԲՄ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

05-ը ապրիլի 2018թ.
ժամը 12[00]

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ.Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ-ԻԾ պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ.Մելիքյան
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Սարգիս Նիկոլյան
**Բացակայում է՝** ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ծևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ծևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

***I. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ.Աբրահամյան)

1.ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23 և 03.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40 որոշումները քննարկելու մասին:
2. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23 և 03.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40 որոշումները քննարկելու մասին**

(Տ.Աբրահամյան)

2.1 «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ 13.02.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի 3-րդ արծանագրության 2.3 կետով՝ ընկերության հայտի մերժման և 4.1 կետով՝ 3-րդ չափաբաժնով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, որը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23 որոշմամբ բավարարվել է:
«Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ 13.03.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժիններով «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ հայտի ապահովման(կանխիկ փողի անդորրագիր) մասով, գտնելով որ վերջինիս ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի պահանջներին, որը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40 որոշմամբ մերժվել է: Ուստի հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի վերոնշյալ որոշումները՝ հանձնաժողովը որոշեց «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ և «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ հայտերը գնահատել հրավերի պայմաններին համապատասխանող՝ չեղարկելով ընթացակարգի 3-րդ արծանագրության 2.3 կետով՝ ընկերությունների հայտերի մերժման որոշումները և «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.**

(Տ.Աբրահամյան)

4.1 06.04.2018թ.՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգում, հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 05.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23 և 03.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40 որոշումները ՝ հանձնաժողովը որոշեց «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ-3-րդ չափաբաժնի մասով հայտարարել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:
4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:
4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ.Գասպարյան |
| **Գնահատող** | Ձ.Մելիքյան |
| **Գնահատող** | Գ.Ռստոյան |
| **Գնահատող** | Ս.Նիկոյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ.Աբրահամյան |